ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ «ՄԱՅՐԵՆԻ», «ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հետազոտական աշխատանք

31 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Կատարող՝ ***Նելլի Օհանյան***

Խմբի պատասխանատու՝ ***Անահիտ Զոհրաբյան***

Արդիականություն

Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման նոր մոտեցումներ և մեթոդներ: Նոր սերնդի համար ժամանակակից աշխարն իր արժեքային համակարգով բավականին բարդ ու անկանխատեսելի է թվում: Արագընթաց փոփոխությունների, նոր արժեքների հորձանուտում երիտասարդ սերունդը դժվարանում է իր համար արժեքային կողմնորոշումներ ձևավորել: Իսկ արժեքների ձևավորումը կատարվում է կրթության միջոցով և կրթության ֆոնի վրա: Կրթության ողնաշարն ու կրթության առանցքը արժեհամակարգն է:

Նպատակ

Բացահայտել «Մայրենի», «Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաների դասավանդման ընթացքում սովորողների արժեհամակարգի ձևավորման դժվարությունները, մշակել մեթոդական նոր լուծումներ:

Խնդիրներ

•Բարձրացնել աշակերտների հետաքրքրվածությունը ազգային և բարոյական արժեքների, նորմերի հանդեպ:
•Աշակերտների մեջ սերմանել հայրենասիրություն, ազգային արժեքները բարձր գնահատելու կարողություն:
•Մայրենիի, հայ գրականության դասերն ընկալել որպես աշակերտների արժեհամակարգի ձևավորման միջոց:
•Վեր հանել այն դժվարությունները, որոնց բախվում են աշակերտները արժեքների յուրացման գործընթացում:

Հետազոտական մաս

Լիվինգսթոն Լարնեդ.
<<Հոր զղջումը>

Դասի նպատակը – *Իմանալ ՝բոլոր մարդիկ էլ կարող են սխալվել,բայց կարևոր է,երբ մարդն անկեղծորեն զղջում է և ընդունում իր սխալը:*

Վերջնարդյունք - *Հասկանալ ՝սխալվել կարող են բոլորը՝թե մեծերը ,թե փոքրերը , և դեռ ամեն ինչ կորած չէ ,երբ մարդը խոստովանում է իր սխալը: Ընտանիքում ամեն ինչ կարգին է ,երբ սերն է իշխում, և կա փոխադարձ հարգանք:*

Մեթոդներ

- Մտագրոհի մեթոդ՝ խթանող հարցեր
- Կարճ դասախոսություն
- Պրիզմա
- Երկանդամի մեթոդ:

Մուշեղ Գալշոյան «Մամփրե արքան»



Դասի նպատակը *– Սովորողների հետաքրքրությունը խթանելն է,նպաստել ,որ նրանք խորհեն հաղորդվող նյութի մասին,վեր հանեն նյութին առնչվող իրենց նախնական գիտելիքները:*

Վերջնարդյունք *- Արդեն դիպաշարին ծանոթանալու առաջին դասից 7-րդ դասարանի հայ սովորողը պիտի իմանա՝Մաշտոցի գյուտը նախ քաղաքական սխրանք էր,և դարձավ հայ ժողովրդի ժառանգության մեծագույն գանձը :*

Մեթոդներ

- Խթանող հարցեր
- Կարճ դասախոսություն
- Բաց հարցերով քննարկում
- Ուղղորդված ընթերցանություն
- Մտածող գլխարկներ

Եզրակացություն

Այսպիսով եկանք այն եզրակացության, որ սովորողների մոտ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և , ըստ իս ,այդ դժվարին առաքելու-թյան <<առյուծի բաժինը>> ընկնում է հայոց լեզվի և հատկապես գրականության ուսուցիչների վրա, քանզի սովորողների արժեքների ձևավորումը առավել ցայտուն կդրսևորվի գրական երկերի միջոցով: 7- 9-րդ և 10-12-րդ դասարանների գրականության դասագրքերում ընդգրկված յուրաքանչյուր հեղինակի ստեղծագործություն իր դերն ունի սովորողի անժեքային համակարգի ձևավորման գործում: Շիտակություն, ազնվություն, ընկերասիրություն, սեր ծնողի, մեծի և փոքրի հանդեպ, մարդասիրություն և, իհարկե, գագաթնակետը՝ հայրենասիրություն. ահա սրանք են կարևորագույն արժեքները, որ կան գրական երկերում:

Ասելիքս ամփոփեմ հետևյալով . սովորողներին միշտ էլ հուզում է նաև ուսուցչի օրինակը ,այսինքն ՝ ուսուցիչն էլ է իր օրինակով ներգործում սովորողի արժեքային համակարգի ձևավորման վրա և պիտի պատասխան ունենա յուրաքանչյուր հարցի համար: Եվ առաջին, և երկրորդ, և առհասարակ շատ դասերի համար ունեմ իմ պատասխանները, ինչպես օրինակ՝ <<Հոր զոջումը>> դասի համար որպես ամփոփում ներկայացնում եմ իմ ընտանիքի տոհմածառը:

Ընդհակառակը